

**Սարգիս Գ. Պետրոսյան (Գյումրի)**

*Պատմ. գիտ. դոկտոր*

**ԽՈՐԵՆԱՑԻԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԻ ԵՎ ՆՐԱ  
ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ  
ՆԱԽԱՏԻՊԵՐԻ ՇՈՒՐՋ<sup>\*</sup>**

**Բանալի բառեր** – արձանագրություններ, Հայա, Հայկակ, Ռիդ–Թեշուբ, Նարամ–Սուեն, Բելոքոս, Արմանում, Ափիսալ, Խուրթինու, Սասուն, Խուրթ:

**Մուտք**

Մ. թ. ա. III հազարամյակի երկրորդ կեսի առաջին դարերում Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում տեղի էին ունեցել աշխարհացունց իրադարձություններ. Միջագետքում ստեղծվել, ապա կործանվել էին առաջին աշխարհակալությունները:

Հայկական լեռնաշխարհի բնակիչները, լինելով միջագետքցիների հարևանները, կրել են դրանց բացասական հետևանքները թե՛ Սարգոն և թե՛ Նարամ–Սուեն բռնապետերի հետ ունեցած առձակատման տեսքով: Ժամանակաշրջանի էրլայական և արքայական արձանագրություններում որոշակի տեղեկություններ կան Արմի/Արմանում երկրի ու իր թագավորների՝ դրանցում ունեցած մասնակցության վերաբերյալ: Դրանց հիշատակները պահպանված են եղել նաև խեթական և հայոց հին (նախամաշտոցյան) պատմագրություններում, որոնցից թափանցել են մի կողմից՝ հունական ինչ–որ աղբյուրի մեջ, իսկ մյուս կողմից՝ տեղ գտել Մովսես Խորենացու երկրում:

---

<sup>\*</sup> Հոդվածն ընդունվել է տպագրության 26.06.2024:

## 1. Խուլթիմու/Ափիսալ երկրի մասին

Հայտնի է, որ Հին աշխարհի թագավորներից շատերը որպես գահանուններ և պատվանուններ ընտրում էին իրենց հովանավոր աստվածների անուններն ու մակդիր-մականունները<sup>1</sup>: Եթե Հայկը կոչվել է **Արեթածին** «բոցածին» և **Արեթայն** «բոցային», ապա դրա պատճառն այն է, որ որպես կրակի անձնավորում՝ այդպես էր կոչվում նրա ցեղային Հայկ աստվածը: Անձավից պեղված ուրարտական վահանի բեկորին նա պատկերված է բոցարձակ մարմնով հսկայի ձեռքով՝ հրեղեն նիզակաչափ նետը ձեռքին<sup>2</sup>: Էրլայական կարճ արձանագրություններից մեկում նա **Հայա** է կոչվում, երբ այդպես էր կոչվում նաև Արմիի թագավորը՝ նույն ինքը պատմական Հայկը<sup>3</sup>: Էրլայական մեկ այլ կարճ արձանագրության մեջ, կրում էր նաև Հայկից հետո ապրած և նրա պես Էրլայից նվեր ստացած Խուլթիմու երկրի ներկայացուցիչը՝ հավանաբար այդ երկրի նախկին ցեղապետ-արքան: Ի՞նչ երկիր էր այդ Խուլթիմուն:

Աքադական արձանագրությունների համաձայն՝ Աքադի թագավոր և Միջագետք-Ասորիքի բռնակալ Նարամ-Սուենը (մ.թ.ա. 2236-2200 թթ.) Հայկական լեռնաշխարհում ունեցել է երկու հակառակորդներ՝ Ափիսալ երկրի ցեղապետ-արքա *Rid-IM*-ը և Արմանում երկրի նույնանուն թագավորը: *Aršal*/Ափիսալ երկիրը տեղադրում են Արևմտյան Տիգրիսի և Վանա լճի միջև<sup>4</sup>: Ըստ երևույթին՝ այն գտնվել է Սասնա լեռներում, որի **Սալնոյ ձոր գավառի** և **Սալնայ** լեռնաձյուղի<sup>5</sup> անունների սալ-բաղադրիչները նույնն են **Ափիսալ** երկանվան -սալ բաղադրիչի և հայերեն սալ-«տափակ քարի մեծ կտոր» բառի հետ: Վերջինը ծագում է հ.-ե. \*kəla- նախա-

1 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Թեշուբի հայկական մակդիրները գահանուններում, «Հանրապետական գիտ. նստաշրջանի նյութեր (նվիրվում է Հ. Աճառյանի ծննդյան 135-ամյակին)», «Էլդորադո», Գյումրի, 2011, էջ 12-21:

2 Տե՛ս **Oktay Belli**, Anzaf Kaleleri ve Urartu tanrıları, «Arkeoloji ve Sanat Yayınları», İstanbul, 1998, s. 40. Թուրք դոկտոր պրոֆեսորի կարծիքով, պատկերվածը Խալդին է, իսկ նրան հաջորդողները՝ «Միերի դռան» արձանագրությունում հերթականությամբ հիշատակված ուրարտական աստվածները (էջ 39-71): Վահանի բեկորին պատկերվածը Հայկը լինելու վերաբերյալ տե՛ս **Պետրոսյան Ա.**, Վիպական Հայկը, պատմական Հայկը և նրա ժառանգությունը, «ՎԷՄ», Եր., 2022, N 1, էջ 22-25:

3 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 27-28(հմմտ. **Иванов В. В.**, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну, «Հայկագուհիներ»(նվիրվում է Հայոց ձորի ճակատամարտի 4500-ամյակին), ՀՀ ԳԱԱ հրատ., Եր., 2013, էջ 451-452:

4 Տե՛ս **Hirsch H.**, Die Inschriften der Könige von Agade, «Archiv für Orientforschung», Graz, 1963, Bd. 20, s. 19-20.

5 Տե՛ս **Երեմյան Ա.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1963, էջ 79, 107 և քարտեզը:

ձևից. հմնտ. հին հնդկ. *çila* «քար, ժայռ», հին իսլ. *hallr* «քար», *hella* «տափակ քար, շերտաքար», գոթ. *hallus* «ընդջրյա խութեր»<sup>6</sup> բառերը: Այս դեպքում *Apīšal* /**Ափիսալ** երկրանվան առաջին բաղադրիչը կարող է արմատակիցն լինել հայերեն **ափն** «եզր, ծայր, ափ, ջրափ» բառի՝ հավանաբար ծագած հ.-ե. \*ap(o)- արմատի \*aph- տարբերակից<sup>7</sup> (հմնտ. նաև նրանով կազմված **ափափայ** (ափ-ափ-այ) «առապար, ապառաժուտ»<sup>8</sup> և **քարափ** բառերը):

Կարծում ենք, որ աքադական արձանագրությունների Ափիսալ և էբլայական արձանագրություններից մեկի հիշյալ Խութիմու երկիրը նույնական են ձիշտ այնպես, ինչպես նրանց առնչվող միևնույն անձնավորությունն է աքադական արձանագրություններում կոչվում *Rid-<sup>D</sup>IM//Rid-Tešub//Rid-Adad*, իսկ էբլայական հիշյալ արձանագրության մեջ՝ *Haja*: Նրան է վերաբերում էբլայի պետական գանձատան հետևյալ հաշվետու գրությունը. «1 կուսիտ գործվածք Հայայի համար՝ Խութիմուից»<sup>9</sup> և «5 գերազանց գործվածք իր միջնորդի համար»<sup>10</sup>: Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն Հայա/Հայկի վերաբերյալ եղած նման հաշվետու գրությունների, այս մյուս Հայայի համար նշվել է նրա՝ Խութիմուից լինելու հանգամանքը:

*Hutimu*(<\**Hut-im-u*/\*Խութ-իմ-ոյ) երկրանվան բաղադրիչներից առաջինը նույնն է հայերեն **խոյթ/խույթ** բառի և Սասնա լեռների **խոյթ/Խույթ** գավառանվան<sup>11</sup> հետ, երկրորդ բաղադրիչի համար հմնտ. հայերեն **-իմ** վերջածանցը (օրինակ, հաւատ-ար-իմ, ձղձ-իմ, մտ-եր-իմ, ոխ-եր-իմ, ուշ-իմ)<sup>12</sup>, իսկ երրորդի համար՝ գրաբարի սեռական հոլովի **-ոյ** վերջավորությունը: Մեր **խոյթ/խույթ** բառը՝ իր ձայնդարձներով և բարբառային ձևերով հանդերձ, ծագում է հ.-ե. \**khait*/\*(s)*khait*- նախածնից և նշանակում է «խոչընդոտ, արգելք, ծովաժայռ, անհարթության», որի **խիթ** ձայնդարձն էլ նշանակում է նաև «խորխորատ, քարանձավ, խութ» և այլն<sup>13</sup>: Սասնա լեռների՝ մասնավորապես նրա **խոյթ/խույթ** գավառի «բարձրա-

6 Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև ՀԱԲ), Երևանի համալսարանի հրատ., հատ. IV, Եր., 1979, էջ 155:

7 Տե՛ս Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև ՋԱԲ), «Աստղիկ» հրատ., Եր., 2010, էջ 105:

8 Մուրադյան Մ., Բառագիտություն, «Հայոց լեզվի պատմական քերականություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. II Եր., 1975, էջ 88-89, ՋԱԲ, էջ 105:

9 Иванов В. В., նշվ. աշխ., էջ 452:

10 Նույնը:

11 Երենյան Ս., նշվ. աշխ., էջ 55, 107 և քարտեզը:

12 Մուրադյան Մ., Բառագիտություն, էջ 90:

13 Տե՛ս ՀԱԲ, հատ. II, Եր., 1973, էջ 325, 361, 364, 414 և ՋԱԲ, 314, 329-330, 347:

բերձ լեռների ու խորունկ ձորերի», «դար ու փոս և քարոտ» դիրքի մասին են խոսում ականատեսների ուղեգրությունները<sup>14</sup>:

## 2. Նարամ-Սուենի դեմ առաջին դաշինքի կազմակերպումը և դրա հետևանքը

Աքադերենով ավելի ուշ գրված «Սարգոնյան ժամանակագրություն» կամ «ժամանակագրություն K» արձանագրության մեջ հանդիպում են հետևյալ տողերը. «Նարամ-Սինը՝ որդին Սարգոնի, արշավեց ընդդեմ Ափիշալ քաղաքի (իմա՝ երկրի) և ձեռք բացվեց... Նա անձամբ գերեց Ռիշ-Ադադին՝ արքային Ափիշալի և sukka-ին Ափիշալի»<sup>15</sup>: Այս հաղորդումը հիմք է տվել հետազոտողներին պնդելու, որ առաջին դիմադրությունը Նարամ-Սուենի նվաճողական քաղաքականությանը հյուսիսային ընդարձակ Սուբարտու երկրում<sup>16</sup> կազմակերպել էր Ափիսալի ցեղապետ-արքան: Նրա հուսալի աջակիցն էր լինելու նրա հետ գերեվարված sukka-ը: Ո՞վ է ներկայացել փիսալցուն բնորոշող այս անձանոթ բառի տակ: Քանի որ sukka բառը արքադագետները և շումերագետները դժվարացել են թարգմանել, ուրեմն այն կարող էր վաղագույն հայերեն լինել և վերաբերել երկրի երկրորդ կարևոր դեմքին:

Որպես օրինակ նշենք, որ դրանից մոտ 800 տարի անց նույնպիսի իրավիճակում էր հայտնվել Հայկական լեռնաշխարհի մեկ ուրիշ երկիր՝ (գտնվում էր Վանա լճից հարավ և արևմուտք ընկած շրջաններում): Խեթ թագավոր Տուդիսալիյա II-ի (մոտ մ. թ. ա 1460-1440 թթ.) «Տարեգրությունը» ցույց է տալիս, որ նրան նախորդած թույլ գահակալների<sup>17</sup> ժամանակ Ասուվայի 30.000-անոց բանակը գրավել էր հարևան, նախկինում խեթերին ենթարկված Խասուվա երկիրը<sup>18</sup>: Հայկական լեռնաշխարհի ներխուժած Տուդիսալիայի բանակը պարտության էր մատնել ասուվացիներին և գերեվարել էր նրա երկու առաջնորդներին՝ Պիյաի-

14 Տե՛ս Սրվանձույանց Գ., Երկեր, ՀՍՍՀ ԳԱ հրատ. , հատ. I , Եր., 1978, էջ 73 և Ա-Պո, Վանի, Բիթլիսի և Երզրումի վիլայեթները, Եր., 1912, էջ 119, 124, 127-129, 140:

15 Hirsch H., նշվ. աշխ., էջ 19-20, Մովսիսյան Ա., Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), ԵՀ հրատ. , 2005, էջ 137:

16 Subartu երկրանվան տակ արքադացիներն հասկանում էին Հյուսիսային Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի սահմանակից շրջանների ամբողջությունը: Անվան ստուգաբանությունը տե՛ս Պետրոսյան Ա., Հարևան երկրների հայկական անվանումները, «Վեմ», Եր., 2021, N 3, էջ 71-72:

17 Տե՛ս “Keilschrifturkunden aus Boghazköi, այսուհետ՝ KUB Staatliche Muzeum zu Berlin, Vorderasiatische Ald.”, Hf. 1-30, Berlin, 1923-1939; XXIII, 14, II, տող 9-10:

18 Տե՛ս KUB, XXIII, 11, III, տող 1-3:

նարային ու Կուկուլիին<sup>19</sup>: Երկրորդին Խեթ թագավորը որոշ ժամանակ անց ազատ էր արձակել, բայց երբ սա պահանջել էր Պիյաինարայի ու մյուս գերիների վերադարձը, խռովություն հարուցելու միջոցով սպանել էր տվել<sup>20</sup>: Ասուվայի առաջնորդներից առաջինը հիշատակված Պիյաինարան եղել է զինվոր-արքա, իսկ Կուկուլին՝ արևաբնույթ քուրմ-արքա, ինչը հաստատվում է նաև նրանց անունների հնդեվրոպական-հայկական ստուգաբանությունների միջոցով<sup>21</sup>: Կարծում ենք, որ սխալված չենք լինի, եթե նույնպիսի մոտեցմամբ փորձենք ստուգաբանել *sukkal* բառը և պարզել այն կրած անձի պաշտոնի բնույթը:

«Ժամանակագրություն K»-ի հաղորդումը Նարամ-Սուենի կողմից Ափիսալի թագավորին գերելու մասին վերաբերում է վերջինիս գործունեության ուշ շրջանին, երբ նա արդեն Արմանումի թագավոր էր, ինչի մասին ավելի մանրամասն կխոսվի ստորև: Հաղորդումը հետաքրքրիչ է մեկ ուրիշ՝ Ափիսալում երկու առաջնորդների սոցիալական ինստիտուտը պահպանված լինելու առումով: Առաջինը զինվոր-արքա *Rid-IM*-ն էր, երկրորդը՝ *sukkal* կոչված պաշտոնյան<sup>22</sup>, որն այլ ոք չէր կարող լինել քան քուրմ-արքա՝ երկրի քրմապետը: Հնարավոր է արագերենով ավանդված *sukkal*-ի՝ վաղ հայերենում **\*շուքալ** հնչելու հանգամանքը: Այն բաղադրված է լինելու **շուք** «շուք, շքեղություն» արմատից և **-աղ** վերջածանցից: Հմնտ. **թակաղ. խանդաղատ, կենցաղ** բառերի **-աղ** վերջածանցները, որոնք, մեր կարծիքով, նույն ծագումն ունեն, ինչ **-եղ** վերջածանցները **անձեղ, աղեղ, թիկնեղ, համեղ, հիւթեղ** բառերում: Դրանք, ըստ Գ.Ջահուկյանի, ծագում են հ.-ե. \***-lo-** ածանցից՝ նախորդող **-ա** ձայնավորով հիմք ունեցող բառերում<sup>23</sup>: Այս դեպքում *sukkal*/**\*շուքալ**-ը և **շքեղ** (<**\*շուք**-եղ) բառը լինելու են միևնույն հնագույն հայերեն բառի տարբերակները: Ընդ որում, **շուք** արմատը առաջնադիրք գործածություն ունի ոչ միայն այդ, այլև **շքալ, շքադիր, շքե-**

19 Տե՛ս KUB, XXIII, 11, III, տող 8-10:

20 Տե՛ս KUB, XXIII, 14, II, տող 9-10:

21 Տե՛ս **Պետրոսյան Ս.**, Ասուվա երկիրը և զույգ առաջնորդների սոցիալական ինստիտուտը, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2002, N 3, էջ 270-275: Հավանաբար, նույնպիսին է եղել նաև XIVդ. (մ. թ. ա. ) Հայաստանի երկմիասնական ցեղամիության սոցիալական կառույցը: Ըստ Է. Ֆորերի, սրա երկու մասերը նախապես գոյություն են ունեցել առանձին-առանձին, ապա միավորվել են որպես մեկ ցեղամիություն (**Forrer E.**, *Hajasa-Azzi*, “Caucasica”, Leipzig, 1931, Fasc. 9, s. 4 f): Միավորման հիմքը լինելու էր զինվորական և քրմական դասերի դաշինքը: Հմնտ. **Պետրոսյան Ս.**, Պատերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, ՀՀ ԳԱԱ հրատ., Եր., 2006, էջ 128-133:

22 Տե՛ս **Foster B. R.**, *Naram-Sin in Martu and Magan*, “Annual Review of the Royal inscription of Mesopotamia project”, vol. VIII, 1990, p. 40-44:

23 Տե՛ս ԶԱԲ, էջ 795:

**ղագարդ, շքեղաշուք**, բառերում: Ինչ վերաբերում է **շուք** արմատի ծագմանը, ապա նրա հնդեվրոպական նախաձևը Գ. Ջահուկյանը համարում է հ.-ե. \**kuako*-ն՝ ծագած հ.-ե. \**keu*- «լուսավորել, լուսավոր» արմատից: Նրա արմատակիցներն են հայ. **շող** և **ն-շոյլ** «շող, ցուլք, փայլուն, շողուն, լուսավոր» բառերը, իսկ ազգակից լեզուների բառերից հմնտ. հին հնդկ. *çukra-/çukla-* «լուսավոր, սպիտակ, մաքուր», ավեստ. *spenta*, լիտվ. *šveñtas*, ռուս. *свѣтой* «սուրբ, սրբազան» բառերը<sup>24</sup>: Հ.-ե. \**keu*- արմատից ծագած կրոնական բնույթի բառերը հնդեվրոպական լեզուներում վերաբերում էին աստվածներին և քրմերին: Ըստ այդմ՝ *sukkal*-ը «շքեղ» («լուսավոր, սպիտակ, մաքուր») իմաստով լինելու էր Ափիսալի քրմապետի (քուրմ-արքայի) պատվանունը:

Վերևում նշվեց, որ Ափիսալի ցեղապետ-արքայի նման կոչվում էր նաև Արմանում երկրի թագավորը: Մեր կարծիքով՝ խոսքը երկու դեպքում էլ վերաբերում է Նարամ-Սուենի հակառակորդ միևնույն անձին: Մեր այս կարծիքի համար հիմք են ծառայում հետևյալ հանգամանքները: Դժվար է պատկերացնել, որ երկու տարբեր երկրների գահակալներ նախնադարում կրեին միևնույն անունը, երբ նրանք մոտ ժամանակներում են ապրել, իսկ նրանց երկրները հարևաններ էին: Ինչ վերաբերում է տարբեր երկրներ ներկայացնելու հանգամանքին, ապա կարող ենք հիշել հետևյալ օրինակը: Ուրարտուի թագավոր Սարդուրի II-ի (մ. թ. ա 764–735 թթ.) հյուսիսային հակառակորդներից մեկը կոչվում էր *Ḫiusini Ḫaniehi LUGAL KURḪi*, այսինքն՝ «Դիուծինի Իգանիեցի՝ թագավոր Էթիուխի/Էթիունի (երկրի)»<sup>25</sup>: Սրա **Իգանիեցի** մակդիրը ցույց է տալիս, որ մինչ Էթիունիի թագավոր հռչակվելը սա եղել է Իգանի երկրի ցեղապետ-արքան: Այդ երկիրը գտնվել է Կարսի շրջանի և հյուսիսային ծովակի (այժմ՝ Չըլդր լիճ) միջև<sup>26</sup>:

Ռիդ-Թեշուրի հետ ևս տեղի է ունեցել նույնը, այսինքն՝ նախապես նա եղել է Ափիսալ երկրի ցեղապետ-արքան, հետո ընտրվել Արմանումի թագավոր: Ըստ երևույթին՝ Հայկի դրած ավանդույթով այդպիսի իրավունք ունեցել են միայն իր դասապետ որդիների՝ Արմանյակի, Խոռի և Մանավազի սերունդները: Հմնտ. հետագա ժամանակաշրջաններից հայտնի Հայոց թագաժառանգի իրավական վիճակի տարբե-

24 Տե՛ս ԶՍԲ, էջ 595, Նույնի, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1987, էջ 57, 132:

25 Меликишвили Г. А., Урартские клинообразные надписи (այսուհետ՝ УКН), Изд. АН СССР, М., 1960, надп. N 155С, с. 302.

26 Տե՛ս УКН, N 128, 155 В1; Арутюнян Н. В., Биайнили (Урарту), Изд. АН Арм. ССР, Ер., 1970, с. 189.

րությունը մնացյալ արքայորդիներից: Ուրեմն կարող ենք ենթադրել, որ Նարամ-Սուենի դեմ հանդես եկած առաջին ռազմական դաշինքը կազմակերպած Ափիսալի արքա Rid-<sup>D</sup>IM-ը նույն Արմանումի թագավոր Rid-<sup>D</sup>IM-ն էր: Սկզբնական շրջանում ունեցած հաջողությունների համար և որպես Հայկի դասապետ որդիներից մեկի որդին նա ընտրվել էր Արմանումի թագավոր:

**Հայկակ/Haja** անվանը փոխարինած աքադական արձանագրությունների Rid-<sup>D</sup>IM սեպագիր անվան երկրորդ բաղադրիչը, լինելով Ամպրոպի աստծու գաղափարագիրը, կարդում են Iškur, Adad, Tešub, իսկ Ուրարտուում այն կարդում էին Teišeba<sup>27</sup>: Բայց անկախ արտասանական տարբերություններից, բովանդակային առումով այս գաղափարագիրը ևս Հայկակի՝ Հայկի զարմից լինելու մասին է խոսում: Ըստ «Վրաց պատմության» («Քարթլիս ցխովրեբա»), Ներբոթի, այսինքն՝ Ներբոթ/Բելի դեմ Հաու/Հայկի և իր կրտսեր եղբայրների տված առաջին ձակատամարտում «նրանց ոտքերի փոշին՝ թանձր **ամպի**, նրանց զրահի փայլատակումը՝ երկնքի **կայծակի**, նրանց գոչյունները՝ **որոտման** ձայնի» նման էին, իսկ Հայկը նրանց «քաջալերում և մխիթարում էր ահարկու ձայնով, որ նման էր կայծակի ձայնունի»<sup>28</sup>:

Եթե Հայկակի Rid-<sup>D</sup>IM գահանվան երկրորդ մասը «Ամպրոպի աստված» էր նշանակում, ապա նրա առաջին մասն էլ կարող էր նշանակել այդ աստծուն առնչվող որևէ երևույթ: Կարծում ենք, որ այդ Rid-ը վերարտադրում է հայերեն **երիթ** «մեծ սեպ» բառի նախնական տեսքը, երբ նրանում դեռևս տեղի չէր ունեցել նախահավելված **ե**-ի միացումը<sup>29</sup>: Այս դեպքում նրա հնդեվրոպական նախածնը կարող էր լինել h.-ե \*ret-արմատը: Է. Աղայանը հայերեն **արդն** բառի առթիվ գրում է, որ սա «ծագում է հնիւ. \*ret-/\*rot-/\*rət- արմատից... մերին առավել մոտ են հին բարձր գերմ. ruota, գերմ. Rute «գավազան, ձող», հին եկեղեցալավ. ratiste, ratovište «նիզակաբուն»<sup>30</sup>: Թեև այս զենքի նախնական ա-

27 **Հնայական Ա.**, Վանի թագավորության պետական կրոնը, ՀՀ ԳԱ հրատ., Եր., 1990, էջ 40-43, 68:

28 «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հատ. I, Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, ԵՀ հրատ., Եր., 1981, էջ 113, “Картлис цховреба” (История Грузии), изд. Артануджи, Тбилиси, 2008, с. 14-15.

29 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Adduru և Eritia սեպագրային լեռնանունների շուրջ, «Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողով (նվիրված է Աղայանի ծննդյան 110-ամյակին), ՀՀ ԳԱԱ ԼԻ, Եր., 2023, էջ 227-228:

30 **Աղայան Է.**, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1974, էջ 32:Հ. -Ե. \*ret-ից է ծագում նաև սասունցի-խութեցիների արաբածև al-artan անվանումը («արթան»-«արիթ»-ան հանրահայտ **-ան** վերջածանցով): Հայտնի է, որ 852 թ.

նունը \*rid/rit ձևով առկա է Rid-<sup>D</sup>IM գահանված մեջ, բայց այստեղ նա «ամպրոպային նիզակ» էր նշանակում: «Նիզակ»/»կայծակ» առասպել-լաբանական համադրման տեսանկյունից ուշագրավ է «կայծակ» պատասխանն ակնկալող ժողովրդական հինավուրց հանելուկը. «Սարեն եկամ վազեվազ, /Ջիդան (նիզակ) թալիմ օխտը գագ»<sup>31</sup>: Հին հնդիկների ամպրոպային Ինդրա աստվածը ևս նման մի զենք ուներ՝ կայծակը խորհրդանշող **վաջրան**: Սրա նախնական իմաստը ևս «սեպ» է եղել<sup>32</sup>:

Այժմ տեսնենք, թե սեպագրության մեջ Rid-<sup>D</sup>IM անունն ստացած և Արմանումի թագավոր դարձած Ափիսալի ցեղապետ-արքայի անձի մասին ինչ է ասում իր քաղաքական հակառակորդ և անձնական թշնամի Նարամ-Սուենը: Միջագետքի բռնապետը գրում է. «Երբ Դագանը որոշեց ճակատագիրը Նարամ-Սուենի՝ հզորի, նրա ձեռքը հանձնեց Ռիդ-Թեշուբին՝ Արմանումի արքային, և նա (իմա՝ Նարամ-Սուենը) անձամբ հաղթեց նրան իր (պալատի) մուտքի կենտրոնում, նա իր արձանը քանդակեց դիրքից և նվիրեց Սին աստծուն: Այսպես է ասում Նարամ-Սուենը՝ հզորը, արքան (աշխարհի) չորս կողմերի. «Դագան աստվածը տվեց ինձ Արմանումն ու Էրլան, և ես հաղթեցի Ռիդ-Թեշուբին՝ Արմանումի արքային»<sup>33</sup>: Այն, որ Նարամ-Սուենի արձանագրության հաղորդումը իրական հիմք է ունեցել, հաստատվում են նրա համառոտ հաղթական այլևայլ արձանագրություններով և Սասնա լեռների հարավային ստորոտին Դիարբեքի քաղաքից մոտ 25 կմ հյուսիս-արևելք գտնվող Փիր-Հուսեյն վայրում իր թողած սեփական պատկերաքանդակով<sup>34</sup>:

Հայաստան ներխուժած արաբական բանակի դեմ խութեցիները ելել էին «բարձեալ աշտեայս հանապազակիրս» (**Թովմա Արժրունի** և **Անանուն**, Պատմության տանն Արժրունեաց, Բնագիրը, թարգմանությունը և ծանոթագրությունները **Վ. Վարդանյանի**, ԵՊՀ հրատ., Եր., 1985, դպր. Բ, գլ. Է):

31 **Հարությունյան Ա.**, Հայ ժողովրդական հանելուկներ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1965, էջ 13:

32 Sten Wörterbuch Sanskrit-Deutsch von Dr.Dr. habil. Klaus Mylius, “VEB Verlag Enzyklopädie”, Leipzig, 1980, S. 418; Ригведа. Мандалы I-IV, Издание подготовила **Т. Я. Елизаренкова**, Изд. АН СССР, Литературные памятники, “Наука”, М., 1989, с. 759; **Աբեդյան Մ.**, Երկեր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. VII, Եր., 1975, էջ 69:

33 Հայերեն ամբողջական թարգմանությունը տես **Մովսիսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 151-152:

34 Sten **Авдиев В.И.**, История древнего Востока, Гос. изд. Политической литературы, Л., 1953, с. 68.



### 3. Հայկակ-Բելոքոս առճակատման արձագանքը հայոց հին պատմագրության մեջ

Նախ նկատենք, որ ո՛չ Նարամ-Սուենը, ո՛չ էլ Ռիդ-Թեշուբը չէին կարող մեր հին պատմագրության մեջ ներկայացված լինել իրենց սեպագրային պաշտոնական գահանուններով: Նրանք նույնիսկ իրենց ժամանակին էին հայտնի լինելու «մեծ», «հայր», «տեր, տիրակալ» և այլ տիտղոսներով ու պատվանուններով: Օրինակ՝ ինչպես տեսանք վերևում, պատմական Հայկը ժողովրդին հայտնի է եղել ոչ թե **Հայա** (ինչպես էբլայական սեպագրերում է), այլ **Հայկ** անունով, Սարգոն Աքադացին հայտնի է եղել ոչ թե **Շարուկեն** (>Սարգոն), այլ **Բել** անունով: Ուրարտուի թագավոր Արամեն (Արամու) ժողովրդին հայտնի է եղել ոչ թե **Լուտիպրի** (ինչպես է իր որդի Սարդուրի I-ի արձանագրություններում), այլ **Արամ** անունով (այստեղից էլ ասորեստանյան արձանագրությունների **Արամե/Արամու**-ն)<sup>35</sup>: Ալանների դեմ մարտնչած (մ. թ. I դ. կեսեր) Հայոց թագավոր եղել է Տրդատ I Արշակունին, բայց հայերին հայտնի լինելով **Արտաշես** գահանունով՝ նա այս անվամբ է մտել «Վիպասանք», որտեղ նրա կերպարը միաձուլվել է պատմական Արտաշես I-ի կերպարին:

Ռիդ-Թեշուբին է վերաբերելու Հայկակ նահապետի մասին Մովսես Խորենացու կատարած հետևյալ միջարկությունը. «Զսմանէ ասեն լինել առ Բելոքոսի և ամբոխս իմն արարեալ անխորհուրդս և մեռանել ի նմին»<sup>36</sup>: Այս Հայկակը՝ Հայկակ I, Հայոց նահապետների ցանկում հիշատակված է Զարմայր նահապետից 12 սերունդ առաջ<sup>37</sup>, ուրեմն, նա չէր կարող լինել ավելի ուշ ժամանակների համար հիշատակված **Միս Հայկակը**՝ Հայկակ II-ը<sup>38</sup>: Եղիական (Տրոյական) պատերազմի մասնակից<sup>39</sup> Զարմայրից 12 սերունդ առաջ ապրած Հայկակ I-ը, բնականաբար ավելի մոտ ժամանակաշրջանում էր ապրելու Հայկին, քան մ.թ.ա. XIII

35 Տե՛ս Ադոնց, Ն., Հայաստանի Պատմություն. Ակունքները, X-VI դդ. մ. թ. ա. , «Հայաստան» հրատ. , Եր. , 1972, էջ 183, 194:

36 Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը Ս. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, ԵՀ հրատ., Եր., 1981, գիրք Ա, գլ. ժթ. , ժան. 1:

37 Տե՛ս նույն տեղում, ժանոթ. 2:

38 Տե՛ս նույն տեղում:

39 Զարմայր նահապետի մասին տե՛ս Պետրոսյան Ս., Պատմականը Զարմայր նահապետի մասին ավանդազրույցում, «ԳՊՄԻ հանրապետական գիտ. նստաշրջանի նյութեր», պրակ. II, Գյումրի, 2009, էջ 28-32:

դարով թվագրվող Տրոյական պատերազմի<sup>40</sup> մասնակից Ջարմայր նահապետը:

Հայկ նահապետի հետ Հայկակի ունեցած ազգակցական կապի տեսանկյունից պարզաբանման և ձգբրտման կարիք ունեն «Բառգիրք հայոց» միջնադարյան բառարանի իրարահաջորդ երեք բառերը. **Հայք, Հայքող, Հայկ**<sup>41</sup>: Բացահայտ է, որ ըստ այբենական շարքի՝ առաջին բառը լինելու էր **Հայկ**-ը: **Հայկ** էր լինելու նաև այն պատճառով, որ նրա համար բերված «**Հայք** – հսկայք» բացատրությունը վերաբերում է ոչ թե **հայ**-ին (հոգնակին՝ **հայք**), այլ **Հայկ**-ին, ինչն հայտնի է մեր մատենագրության սկիզբն ավետող Աստվածաշնչի թարգմանությունից<sup>42</sup>:

Ուրեմն քննարկվող բառերից առաջինն ունենալու է հետևյալ տեսքն ու բացատրությունը՝ **Հայկք**-հսկայք: Քննարկվող բառերից երկրորդը «Բառգիրք հայոց»-ում բերված է հետևյալ տեսքով և հետևյալ բացատրությամբ. «**Հայքող**–որդի»: Բառարանը տպագրության պատրաստած և բազմաթիվ բառահոդվածների աղավաղումները սրբագրված Հ. Ամալյանը գրում է. «Այս բառահոդվածը հավանաբար «Հայկ, որդի Թորգոմայ» պիտի լինի, սակայն ոչ մի ձեռագիր փաստ չի տալիս հոգուտ այս կարծիքի»<sup>43</sup>: Այբենական շարքի համաձայն՝ **Հայքող** բառն այստեղ չէր լինելու և թվում է ներմուծված բանից անտեղյակ գրիչի կողմից՝ **Հայկ** անվան հետ ունեցած հնչյունական նմանության պատճառով: Իսկ նրա բացատրությունը՝ «որդի»-ն, իր տեղում է, բայց հաջորդի «փոքր» բացատրության հետ միասին՝ «**Հայկ**-փոքր»: Այստեղ էլ ստացվել է հակասություն հանրահայտ **Հայկ** «հսկա» և այս «փոքր» բացատրության միջև: Դա հարթել կարելի է միայն «որդի փոքր» իմաստով, բայց ոչ թե **Հայկ**, այլ **Հայկակ** բառահոդվածի համար: Քանի որ «որդի»-ն ընդհանրապես «Ժառանգ» էլ է նշանակում<sup>44</sup>, տվյալ դեպքում «փոքր որդի»-ն **թոռն** է լինում:

40 Տե՛ս **Блаватская Т. В.**, Троянская война, «Советская историческая энциклопедия», т. XIV, М., 1973, с. 470.  
 41 Տե՛ս «Բառգիրք հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Հ. Ամալյանի**, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1975, էջ 170, տողեր N 114, 115, 116:  
 42 Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», երկասիրութիւն **Գ. Աւետիքեանի, Խ. Սիրմէլեանի, Ս. Աւգերեանի**, հատ. II, Վենետիկ-Երևան, 1981, էջ 31, 32:  
 43 «Բառգիրք հայոց», էջ 394, ծան. 115: Ընդ որում, **հայքող** և աղավաղված **հաքոյզ/հաքոյզ** ձևերը ձեռագրերում բերված են նաև «որթ, որթի», «որդի կամ որդն», «որդի կամ որդն կերք էին հրեշտակաց» բացատրություններով («Բառգիրք հայոց», էջ 183, 394 ծան. 115, 396 ծան. 231):  
 44 Տե՛ս նույն տեղում, էջ 258: Մեր կարծիքով, առաջին՝ **Հայկ** և երկրորդ՝ **Հայկակ** բառերից հետո եկող երրորդ բառը լինելու էր **Հայկն** բառահոդվածը, որն իր տեղում չէ և հայտնվել է

Ըստ երևույթին՝ Հայկի թոռ Հայկակ I-ը ծնվել էր նրա մահվանից հետո, որով և ճանաչվել էր նրա **Հայկ** անունը կրելու իրավունքը: Ի տարբերություն թոռանը կենդանի պապի անունով կոչելու մեր ժամանակների սովորույթի՝ հին հայերը այդպիսի ավանդույթ չեն ունեցել, որովհետև այդպիսի քայլի դիմողը պապի մահը ցանկացած կլիներ: Ծայրահեղ դեպքում նա կարող էր ընտրել բառային նույն հիմքով կազմված որևէ անուն: Երկու դեպքի համար բերենք օրինակներ: Տրդատ III-ը ծնվել էր իր պապ Խոսրով Մեծի հայր Տրդատ II-ի մահվանից հետո, իսկ Խոսրով III-ը՝ հայտնի որպես **Խոսրով Փոքր** (պարսկաձև՝ **Խոսրով Կոտակ**) **Խոսրով** էր կոչվել ի հիշատակ իր պապ Խոսրով Մեծի: Տրդատ III-ի թոռը՝ Խոսրով III-ի որդին, ոչ թե **Տրդատ**, այլ **Տիրան** է կոչվել, որովհետև ծնվել էր պապի կենդանության օրոք, իսկ նույն Տիրանի թոռը՝ Արշակ II-ի եղբորորդին նույնպիսի պատճառով կոչվել է **Տիրիթ**: Պապի կենդանության օրոք (կույր Տիրանը Կուաշ ավանում էր) ծնվել էր նաև Արշակ II-ի որդին՝ ապագա **Պապ** թագավորը, որը **Պապ** է կոչվել ի հիշատակ իր **պապ** Տիրանի:

Մովսես Խորենացին Հայկակ I-ին նախորդած, Արա Գեղեցիկին հաջորդած նահապետների ցուցակ է բերում, բայց Արային հաջորդածներից միայն Կարդոսից (Արայան Արա) և սրա որդի Անուշավան Սոսանվերից բացի, դրանց մասին որևէ լրացուցիչ տեղեկություն չի հաղորդում<sup>45</sup>: Կարծում ենք, որ նրա օգտված աղբյուրում դրանք թվարկված են եղել որպես Հայկի սերունդներ, բայց դրանց շարքում հավանաբար եղել են նաև երբևէ թագավոր չեղած անձինք: Այս առթիվ հիշենք հետագա Մեծ Հայքի Աղիովիտ, Առբերանի և Հաշտյանք գավառներում տիրույթներ ունեցած արքայազների սերունդների՝ թագավորական սեպուհների կարգավիճակը<sup>46</sup>:

Հայկակ I-ին Հայկ նահապետի ժամանակներին ավելի մոտ ժամանակաշրջանում տեղորոշելու և Հայկի թոռը համարելու հավանակա- նությունը մեծ է նաև այն պատճառով, որ նրա հակառակորդն էլ **Բեղո-**

---

«Հայրեաց - կցորդեաց» և «Հայրհայրանք – սպառնալիք կամ խրոխտալ» բառերի միջև (նույն տեղում, էջ 178): Դրանով **Հայկն** բառահոդվածը խախտել է այդ բառերի այբբենական կարգը, իսկ ինքը կորցրել է իմաստային կապը **Հայկ** և **Հայկակ** բառերի հետ: Հիշենք, որ **Հայկն**-ը Օրիոն համաստեղության պատմական Հայկի ցեղային աստվածության խորհրդանշի հնագույն հայկական անունն էր. հմմտ. «Հայկն – Կշիռն, զոր Շամփուր ասեն, կամ Պատ(ր)ուակք» (նույնը): Այս դեպքում **Հայկ** բառի և նրան արմատակից-իմաստակից բառերի այբբենական կարգը նախապես ունենալու էր հետևյալ տեսքը. «Հայկ - հսկայ», «Հայկակ - որդի փոքր», «Հայկն – Կշիռն, զոր Շամփուր ասեն. . . »:

45 Տե՛ս **Մովսիսի Խորենացու** պատմություն Հայոց, Ա, ժթ:

46 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Եր., 1971, էջ 827-828, 841:

**քոս** էր կոչվում: Այս անունն իր առաջին բաղադրիչով նույնահունչ է Հայկի հակառակորդի **Բել** (<սեմ. «տեր») անվան հետ: Հայոց ավանդական (հին, նախամաշտոցյան) պատմագրության մեջ այստեղ կարող էր լինել Բելի (պատմական նախատիպը՝ Սարգոն Աքադացի) թռռան անունը, որովհետև իրականում էլ Նարամ-Սուենը կարող էր ունենալ իր պապի **Բել** անվան հետ նույնիմաստ և համահունչ մի անուն, ինչպես է մեր **Հայկ**-ի և **Հայկակ**-ի դեպքում: Ամենայն հավանականությամբ՝ ինչոր այլ աղբյուրից բերած հիշյալ ծանոթագրությունը Մովսես Խորենացուն հնարավորություն չի տվել Հայկակի հակառակորդին «Քաղդէացւոց արքայացանկ»-ի Բելոքոսի հետ նույնացնելով հանդերձ՝ ըստ դրա ճշգրտելու նրա հակառակորդի՝ Հայկակի տեղը մեր արքայացանկում: Մանավանդ, որ «Հայոց արքայացանկի» Հայկակի դիմաց Բելոքոսի փոխարեն ուրիշ անձ է դրված: Ցանկի երկու Բելոքոսներից մեկի դիմաց «Հայոց արքայացանկի» Զաւանն է (և «Եբրայեցւոց արքայացանկի» Ամրամը՝ Մովսես մարգարեի նախորդը), իսկ մյուս Բելոքոսի դիմաց «Հայոց արքայացանկի» Վստամն է (և «Եբրայեցւոց արքայացանկի» Եփթայը)<sup>47</sup>:

Ի դեպ, տարիներ առաջ տպագրված մեր հոդվածներից մեկում մենք ցույց էինք տվել, որ «Քաղդէացւոց արքայացանկ» ընդգրկված անձինք շփոթված են եղել ցանկը եզրափակող Սարդանապաղոսի, այսինքն՝ Ասորեստանի հզոր թագավոր Աշուրբանիպալի նախնիների և նախորդների հետ: Պատճառը եղել է հույն մատենագիրների կողմից երկու նմանահունչ երկրանունների շփոթումը՝ Ասորեստանի հունական 'Ασσυρία անվան և Փոքր Ասիայի արևմուտքում գտնված 'Ασία//խեթական Aššua (կարդա՛լ Asua) երկրանվան<sup>48</sup>: Անշուշտ, «Քաղդէացւոց արքայացանկը» Միջագետքի սեմական տարրին վերագրված լինելու պատճառով է մեր Պատմահայրը այդտեղ որոնել Հայկակ I-ի հակառակորդի **Բել**- բաղադրիչով անունը և կանգ է առել նման հնչող **Բելոքոս** անվան վրա: Վերջինը կարող է ծագումնաբանական կապի մեջ լինել հունարեն βέλος բառի հետ, որը ոչ միայն «նիզակ, գեղարդ, նետ» է նշանակել, այլև «սուր, հերուն» և «կայծակ»<sup>49</sup>: Անկախ սրանից՝ Մով-

47 Տե՛ս Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց, Ա, Ժբ:

48 Տե՛ս Պետրոսյան Ս., Զարմայր նահապետի և «Քաղդէացւոց» արքայացանկի շուրջ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ «Գիտական աշխատություններ», հատ. XVII, Գյումրի, 2014, էջ 58-69:

49 «Древнегреческо-русский словарь», Составил И. Х. Дворецкий, Гос. изд. Иностранных и национальных словарей, т. I, М., 1958, с. 293. Հին հունարեն **Բել** զինատեսակի, **Բել** և **Բելոքոս** անունների միջև կա՛պ է տեսել Մովսես Խորենացին. հմմտ. Հայկի հակառակորդ Բելի

սես Խորենացու երկի Բելոքոսի պատմական նախատիպը եղել է Հայկակի ժամանակակից ու հակառակորդ Նարամ-Սուենը, որն ունեցել է **Բել**– բաղադրիչով անուն կամ իր պապի նման պարզապես **Բել** «տեր, տիրակալ» է կոչվել:

#### 4. Երկրորդ հակաաքադական դաշինքը: Նրա կազմավորման սկզբունքը և մասնակիցները

Էրլայի կործանումը, Արմանումի թագավորի գերեվարումը, մանավանդ, Նարամ-Սուենի աստված հռչակումը (ձևականորեն՝ քաղաքացիների ցանկությամբ)<sup>50</sup> և նրա՝ նոր նվաճումներ կատարելու ձգտումը զգուշացումներ էին Առաջավոր Ասիայի շատ գահակալներին և վաղ թե ուշ պետք է հարուցեր նրանց կազմակերպված դիմադրությունը: Եվ իսկապես, 17 թագավորների (ցեղապետ-արքաների) կնքած հակաաքադական դաշինքի մասին մեզ հասել են սեպագիր երկու արձանագրություններ: Դրանցից մեկը արադերեն գրված սալիկ է, իսկ մյուսը խեթերեն խմբագրված մի տեքստ, որի ուշադրության կենտրոնում Նարամ-Սուենի տարած հաղթանակն է 17 թագավորների դեմ: Հետազոտողները նկատել են, որ վերջինների անունները լրիվ չեն համապատասխանում խեթերենում և նրա բաբելոնյան քաղերենով «բնօրինակում»<sup>51</sup>: Արմանումի թագավորի անվան դեպքում ևս այդպիսի անհամապատասխանություն կա, բայց, անկասկած, դա բացատրվում է Ռիդ-Թեշուբի գերեվարումով (հավանական սպանությամբ) և նոր թագավորի գահակալումով:

Ինչպես նշվեց, 17 թագավորներից շատերի անունները, երկու տեքստում տարբեր են, ընդ որում, վերջնականապես պարզված չէ նաև նրանց երկրների տեղադրությունը: Սովորաբար նշվում է, որ «17»-ի երկրներն ընդգրկում էին Փոքր Ասիայի կենտրոնից մինչև Էլամի լեռնային շրջաններ ձգված ընդարձակ տարածքը: Հասկանալի է, որ դրա մեջ էին եղել նաև Հայկական լեռնաշխարհի հարավի ինչ-որ երկրներ: Դրանց թվում, ըստ խեթերեն տեքստի, եղել էին Ուլիվին՝ իր Լապանիլա թագավորով (բերված ցուցակում 3-րդն է) և Արմանին՝ իր Մադա-

---

ունեցած սպառազինությունը՝ «յառեկէ զսուրն երկսայրի, և **Նիզակ անարի ի ձեռին իրում աջոյ, և յառեկումն վահան» (Մովսիսի Խորենացոյ պատմութիւն Հայոց, Ա, Ժա):**

50 Տե՛ս **Дьяконов И. М.**, Ранние деспотии в Месопотамии, «История древнего мира. Ранняя древность», Главная редакция восточной литературы, М., 1989, с. 79.

51 **Герни О. Р.**, Хетты, изд. «Наука», М, 1987, с. 159.

կինա թագավորով (ցուցակում 11-րդն է)<sup>52</sup>: Այս վերջինն է լինելու խորենացիական Ամպակ նահապետի՝ Հայկակի հաջորդի պատմական նախատիպը<sup>53</sup>:

«Նարամսինը և իր թշնամիները» խեթերեն տեքստի համաձայն՝ զագրոսյան Լուլուբի երկրի թագավոր Անուբանին և իր 7 որդիներն էին գլխավորում իրենց և դաշնակից երկրների աշխարհագրորդ, որոնցից 360 հազարը (չափազանցված թիվ է) իրենց սեփական ուժերն էին, իսկ 90 հազարը՝ դաշնակիցների: Ըստ երևույթին՝ խեթերեն տեքստում ինչ-որ բան շփոթվել է: Տրամաբանական է, որ ոչ թե լուլուբեական, այլ դաշնակից երկրների աշխարհագրորին է վերաբերել 360.000-ը, իսկ 90.000-ը կարող էր լինել գուտ լուլուբեական աշխարհագրորի թիվը, մանավանդ, որ 360.000-ի հիմքում մեկ տարվա 360 օրերի քանակն է նկատի առնվել (ըստ արեգակնային տոմարի): **Ավելյաց** կոչված հնգօրյա ամսի հավելումով ստեղծված 365-օրյա տարվա հասկացությունն այն ժամանակ դեռևս չի եղել<sup>54</sup>:

Բերված մյուս թվերը՝ 7-ը և 17-ը, ավելի ուշագրավ են : Միացյալ բանակի հրամանատար եղբայրների թիվը՝ «7»-ը, սրբազան թիվ էր, որը խորհրդանշում էր տիեզերքի ամբողջությունն ու ամբողջականությունը. ուղղահայաց դիտած՝ երկինքը, երկիրը, ընդերքը (ստորերկրյա աշխարհ) և հորիզոնական դիտարկված երկիրը չորս կողմերով՝ հյուսիս, հարավ, արևմուտք և արևելք: Այսպիսով, 3+4=7: Դաշնակից թագավորների «17» թիվը ևս պատահական չէր լինելու:

Աստված հռչակված թագավորի դեմ հանդես եկածների «17» թիվը քրմերի հայեցողությամբ էր ընտրված լինելու և մոգական ներգործությամբ պայմանավորելու էր գործողության հաջողությունը և բարեհաջող ավարտը: Չէ՞ որ 17-ը ոչ մի թվի վրա չէր բաժանվում, ուստի ապահովելու էր ուխտի մասնակիցների անբաժանելի միասնությունը: Իսկ ի՞նչ ներքին բաղադրիչներից էր բաղկացած լինելու այդ թիվը: Եթե նկատի առնենք, որ հասարակության առաջատար դասերը քրմությունն ու զինվորականությունն էին, ապա կարող ենք ասել, որ այդ 17-

52 Տե՛ս Forrer E., Die Boghazköi-Texte in Umschrift, II, Leipzig, 1926, S. 2; Արոնց Ն., նշվ. աշխ., էջ 26-ի ծանոթագրությունը:

53 Մովսես Խորենացու բերած նահապետների ցանկում Ամպակ կոչված անձի անունը նույնպես «ամպրոպային» բնույթ ունի՝ բաղկացած «ամպ» բառից և -ակ փոքրացուցիչ-փաղաքշական վերջածանցից: Հմմտ. -ակ հայերեն բնիկ վերջածանցը անրակ, բռնակ, գնդակ («խաղողի խիղբ»), դռնակ, եզնակ և այլ բառերում: Ամպ բառը նաև «շանթ, կայծակ» էր նշանակում և արմատն է ամպրոպ «փոթորիկ, կայծակ ու որոտ» բառի (ՀԱԲ, հատ. I, Եր, 1971, էջ 162-163, ՋՍԲ, էջ 47):

54 Տե՛ս Բաղայան Հ., Օրացույցի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր, 1970, էջ 22, 24:

ը բաղկացած էր քուրմ-արքաներից և զինվոր-արքաներից: Բայց դրանցից քանի՞սն էին քրմական և քանի՞սը զինվորական դասի ներկայացուցիչներ: Մեր կարծիքով՝ 17 ցեղապետ-արքաներից վերջին 10-ին կարելի է համարել զինվոր-արքաներ՝ նկատի առնելով բանակային ստորաբաժանումների տասնյակներով խմբավորման սկզբունքը՝ տասնյակներ, հարյուրյակներ, հազարյակներ<sup>55</sup>, բյուրեր, իսկ առաջին 7 ցեղապետ-արքաները լինելու էին քուրմ-արքաներ: Նախ սրանք են հիշատակվել, որովհետև Նարամ-Սուենի դեմ կռիվը նաև գաղափարախոսական բնույթ ուներ՝ աստված հռչակված մահկանացուի դեմ հանդես գալը նախ և առաջ քրմերի սրբազան գործն էր:

Ամենայն հավանականությամբ՝ «7» թվի ընտրության նման «17»-ի մեջ տեղերի բաշխումը ևս տեղի է ունեցել քրմերի հայեցողությամբ:

Վերևում բերված «17»-ի ցուցակում, ինչպես ասվեց, կային նաև Հայկական լեռնաշխարհի ցեղապետ-արքաներ: Դրանցից երկուսի՝ Ուլիվիի Լապանիլա թագավորի և Արմանիի Մադակինա թագավորի անունները հայտնվել էին տարբեր խմբերում՝ Լապանիլան ցուցակը գլխավորող յոթնյակում՝ քուրմ-արքաների խմբի մեջ, իսկ Մադակինան՝ յոթնյակին հաջորդող տասնյակում՝ զինվոր-արքաների խմբի մեջ: Իսկ նրանց երկրները հարևաններ էին՝ Ուլիվին Սասնա լեռների հարավային ստորոտին էր (համաձայն հետագա ասորեստանյան և ուրարտական արձանագրությունների)<sup>56</sup>, իսկ Արմանի/Արմանումը՝ Արևմտյան Տիգրիսի հովտում<sup>57</sup>: Բնականաբար, քուրմ-արքաների խմբում Լապանիլան հայտնվել էր քուրմ-արքա լինելու պատճառով, նույնպիսի մի պատճառով զինվոր-արքաների խմբում հայտնված Մադակինան լինելու էր զինվոր-արքա: Նրանք էին սյուս 15-ի հետ միասին շարունակել պայքարը Նարամ-Սուենի դեմ:

Երկրորդ հակաաքադական դաշինքի դեմ տարած հաղթանակներից հետո Նարամ-Սուենը ստիպված է եղել ռազմական գործողություններ սկսելու Հայկական Տավրոսից Միջագետք ներխուժած կուրիների դեմ<sup>58</sup>: Մարտերից մեկի ժամանակ էլ նա սպանվել էր<sup>59</sup>, իսկ

---

55 Տե՛ս «История древнего Востока», под ред. **В. И. Кузищина**, М., «Высшая школа», 1979, с. 154.  
56 Տե՛ս **Дьяконов И. М.**, Ассиро-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951, NN 2,3,4, надп. NN 42-43, с. 52-53; **Forrer E.**, Die Provinzeinteilung des assyrischen Reiches, Leipzig, 1920, S. 85; **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 97-98:  
57 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Վիպական Հայկը, պատմական Հայկը և նրա ժառանգությունը, «Վէմ», էջ 31-32, **Պետրոսյան Ա.**, Էբլայերեն և քադդերեն արձանագրությունները Հայկի և իր երկու տոհմապետերի մասին, «Վէմ», 2023, N 3, էջ 191-194:  
58 Ասորեստանյան սեպագիր արձանագրությունների համաձայն, կուրիները բնակվում էին ոչ թե Ջագրոսում, այլ Հայկական լեռնաշխարհում Ուրուատրի ցեղամիության (Հայկական

հաջորդ տարիներին նրա ստեղծած աշխարհակալությունը կործանվել էր նույն կուրիների կողմից<sup>60</sup>:

Մեր քննության առարկան դարձած հարցերի փոխադարձ կապակցվածության տեսանկյունից պակաս ուշագրավ չէ նաև Միջագետքը նվաճած կուրիների առաջնորդի «աշխարհի չորս կողմերի առաջնորդ» տիտղոսը (այն Նարամ-Սուենն էր կրում) և Enrida-Pizir գահանունը: Գահանվան առաջին մասը բաղկացած է en- և -rid(a) բաղադրիչներից, որոնցից en-ը հնչյունական արտացոլումն է շումեր. EN «տեր, տիրակալ» գաղափարագրի՝ կիրառված նաև Enlil, Enki, Enmerkar և այլ դիցանուններում, իսկ -rid(a) բաղադրիչը նույնն է Հայկակի Rid<sup>D</sup>IM սեպագրային գահանվան Rid բաղադրիչի հետ: Ինչպես վերևում տեսանք, այն գործածված էր «(ամպրոպային) նիզակ» իմաստով: Կուրիների առաջնորդի գահանվան pizir մասը, մեր կարծիքով, հատկացուցիչն է իր նախորդ rid(a) «նիզակ» հատկացյալի և նրա հետ միասին ունեցել է «նիզակ պատերազմի» իմաստը: Pizir-ն բաղադրյալ բառ է՝ բաղկացած piz- արմատից և -ir վերջածանցից: Սրանք նույնպես իրենց զուգահեռներն ունեն հայերենում: Արմատի համար հմնտ. հայ. **պիզմ** «կռիվ, վեճ, հակառակություն»<sup>61</sup> բառը, իսկ ածանցի համար **-եր** և **-իր** վերջածանցները՝ ծագած հ.-ե. \*(e)ro և \*(i)ro նախածներից<sup>62</sup>: Մեր **պիզմ**-ը համարվում է «ծագումն անհայտ բառ»<sup>63</sup>, սակայն նրա սեռական **պրզման/պզման** հոլովածնը<sup>64</sup> խոսում է ուղղական հոլովում **\*պիզմն** տեսքով նախածն ունենալու և **-մն** վերջածանցով հնդեվրոպական ծագումով **կողմն, ջերմն, սերմն** և այլ բառերի խմբին պատկանելու մասին: Սրանց **-մն** (<հ.-ե. \*-men) վերջածանցն մեր լեզվի արդեն իսկ «հին շրջանում գործուն չի եղել»<sup>65</sup>: Այսպիսով, կուրիների առաջնորդի En-rida-pizir գահանվան իմաստն է «Տեր պատերազմի նիզակի»:

Տավրոսի արևելքում) և Կադմուխի (Կադմեայ տունը Արևմտյան Տիգրիսից հարավ) միջև: Տե՛ս АВИИУ, NN, 2, 4, 5, 7 և N 1 пр. 4; **Арутюнян Н. В.**, Биаинили (Урарту), с. 12, 23-24; «Հայ ժող. պատմ. քրեստոմատիա», հատ. I, էջ 15:

59 Տե՛ս **Кифишин А. Г.**, Нарамсин, «Советская историческая энциклопедия», Изд. «Советская энциклопедия», т. IX, М., 1966, с. 903.

60 Տե՛ս **Մովսիսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 77-80:

61 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. II, էջ 648, ՀԱԲ, հատ. IV, էջ 80:

62 Տե՛ս ՀԱԲ, էջ 805, 807:

63 Նույն տեղում, էջ 636:

64 Տե՛ս ՀԱԲ, հատ. IV, էջ 80, Մալխասյանց Սո., Հայերեն բացատրական բառարան, ՀՍՍՌ Պետ. հրատ., հատ. IV, Եր., 1945, էջ 98:

65 ՀԱԲ, էջ 808:



Ամենայն հավանականությամբ՝ կուրթիների առաջնորդը իր արքա-դական տիտղոսով ներկայանում էր որպես Միջագետքի լիիրավ տեր, իսկ գահանվան միջոցով շեշտում էր Ամպրոպի աստծո հովանավորյալ Հայկազանց թագավորական տոհմին՝ իր պատկանելու հանգամանքը:

### Եզրակացություններ

1. Հայկակ նահապետի (Հայկակ I) պատմական նախատիպը ևս Հայկի նման **Հայա** անվամբ է վկայված Էբլայի արձանագրություններում, բայց նախապես ոչ թե Արմանում, այլ Խուրթիմու երկրի առնչությամբ:
2. Հայկակը արքադական արձանագրություններում հանդես է գալիս Rid-<sup>D</sup>IM անունով՝ որպես Ափիսալ երկրի, ապա նաև Արմանումի թագավոր: **Ափիսալը** և **Խուրթիմուն** Սասունի հնագույն անուններն են:
3. Ինչպես **Հայկակ** անունը կրելը, այնպես էլ Արմանումի թագավոր դառնալու իրողությունը պայմանավորված են եղել նաև այս Հայկակի մեր առաջին թագավոր Հայկի թոռը լինելու հանգամանքով: Դրա մասին է խոսում նաև նրա Rid-<sup>D</sup>IM անվան երկրորդ բաղադրիչը՝ Ամպրոպի աստծո գաղափարագիրը:
4. Սրա հակառակորդի նախատիպը Նարամ-Սուենն էր՝ Սարգոն Աքադացու (Բել) թոռը, որին Մովսես Խորենացին (նրա կրած անվան պատճառով) նույնացրել է «Քաղդեացուց արքայացանկի» Բելոքոսի հետ:
5. Հնդեվրոպական-հայկական ծագում ունեն նաև հողվածում ստուգաբանված Rid-<sup>D</sup>IM գահանվան առաջին բաղադրիչը և Հայկական Տավրոսին վերաբերող Šukkal, Apīšal, Hutimu և այլ անունները:
6. Հողվածում դիտարկված նյութը և բերված հատուկ անունների ստուգաբանությունները ևս խոսում են մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսի Արևմտյան Տիգրիսի ավազանի և Հայկական Տավրոսի բնակչության հնդեվրոպական-հայկական ծագում ունենալու մասին:

**Սարգիս Գ. Պետրոսյան** – հեղինակ է 2 մենագրության և ավելի քան 150 գիտական հոդվածների: Զբաղվում է Հայաստանի և Արևելքի երկրն-

երի հնագույն ու հին պատմության, ինչպես նաև հոգևոր մշակույթի հարցերով:

Էլ. հասցե՝ Vah1996@mail.ru

Summary

## ON THE PROBABLE HISTORICAL PROTOTYPES OF HAYKAK AND HIS OPPONENT

**Sargis G. Petrosyan** (Gyumri)

*Doctor of Historical Sciences*

**Key words** – inscriptions, Haya, Haykak, Rid-Teshub, Naram-Suen, Belokhos, Armanum, Apisal, Khutimu.

Eblaitic cuneiform texts testify that in the 3rd millennium B.C. there was a country Hutimu in the mountains of the Armenian Taurus. In Akkadian sources it is called Apisal. The roots of those toponyms are preserved in the Sasun districts of Hoyt/Hut, Salno-dzor ("Salno Gorge"), and Salna-lerink ("Salna Mountains").

The Eblaitic texts also preserve the name of the king of this country in the form of Haya (Haja). Before him, the Eblaites called the king of the neighbouring known country Armi (Akkad.: Armanum, in the basin of the Western Tigris), who is identified with Hayk - ethnarch of the Armenians. Supposedly, the second Haya is the grandchild of the first Haya/Hayk, as he bore the name Haykak in Movses Khorenatsi's "History of Armenia". In the word **Haykak** we can see the name Hayk and the diminutive suffix -ak. No doubt Haykak (Haya the second) is the same person as the contemporary of Naram-Suen, the king of Akkad, Rid-Teshub (Rid-<sup>D</sup>IM), whom Akkadian sources consider the king of the country of Armanum.

At that time, when Rid-Teshub ruled the Apisal/Hutimu country, he led the struggle against Naram-Suen, that is why he was elected king of the Armanum country. In Movses Khorenatsi's testimonies, Haykak's adversary is a certain Belokhos, whose prototype (as an epic image) was undoubtedly the historical Naram-Suen. There is a mention that Haykak lived in the time of Belokhos and, having rashly arranged troubles, died in them" (Khorenatsi, I, 19). So Haykak, i.e. Rid-Teshub really died at the hands of Naram-Suen, in spite of the fact that in his inscription the Akkadian king speaks only about the capture of his adversary. As for Naram-Suen, he was eventually killed in battle during the invasion of Mesopotamia by the Kutian - hill tribes of the Armenian Taurus.

## О ВЕРОЯТНЫХ ИСТОРИЧЕСКИХ ПРОТОТИПАХ ГАЙКАКА И ЕГО ПРОТИВНИКА

Саргис Г. Петросян (Гюмри)

*Доктор ист. наук*

**Ключевые слова** - надписи, Хайа, Гайкак, Рид-Тешуб, Нарам-Суэн, Белохос, Арманум, Аписал, Хутиму.

Эблаитские клинописные тексты свидетельствуют, что в III тыс. до н.э. в горах Армянского Тавра существовала страна Хутиму (Hutimu). В аккадских источниках она называется **Аписал** (Apišal). Корни этих топонимов сохранили сасунские районы **Хойт/Хут**, **Сално-дзор** («ущелье Сално»), а также горы **Сална-леринк** («горы Сална»).

В эблаитских текстах сохранилось также имя властелина этой страны - Хайа (Haja). До него эблаиты так называли царя соседней известной страны Арми (аккад. Арманум, в бассейне Западного Тигра), который идентифицируется с Гайком (Наук) - этнархом армян. Вероятно, второй Хайа - внук первого Хайа/Хайка, т.к. носил имя Гайкак (Наукак), как написано в «Истории Армении» Мовсеса Хоренаци. В слове Наукак налицо имя Наук и уменьшительный суффикс *-ak*. Без сомнения Гайкак (Хайа Второй) то же самое лицо, что и современник Нарам-Суэна - царь Аккада, Рид-Тешуб (Rid-<sup>D</sup>IM), которого аккадские источники считают царем страны Арманум.

Ещё тогда, когда Рид-Тешуб властвовал в стране Аписал/Хутиму, он возглавил борьбу против Нарам-Суэна. Надо полагать, потому и избрали его царем страны Арманум. У Мовсеса Хоренаци противник Гайкака - некий Белохос, прототипом которого (как эпического образа), несомненно, послужил исторический персонаж Нарам-Суэн. Наш историк о Гайкаке пишет: «О нем говорят, что жил при Белохосе и, необдуманно устроив смуты, погиб в них» (Хоренаци, I, 19). Значит Гайкак, т.е. Рид-Тешуб действительно погиб от рук Нарам-Суэна, несмотря на то, что в своей надписи аккадский царь говорит только о пленении своего противника. Что касается самого Нарам-Суэну, то он погиб в бою во время нашествия в Месопотамию кутиев - горских племен Армянского Тавра.

### Օգտագործված գրականություն

1. «Բառգիրք հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Անայան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1975:

2. «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հատ. I, Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, ԵՀ հրատ., Եր., 1981:
3. «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971:
4. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», երկասիրություն Գ.Աւետիքեան, Խ.Սիրմելեան, Մ.Աւգերեան, հ. II, Վենետիկ-Երևան, 1981:
5. «Древнегреческо-русский словарь», Составил **И. Х. Дворецкий**, Гос. изд. Иностранных и национальных словарей, т. I, М., 1958.
6. «История древнего Востока», под. ред. В.И. Кузицина, М., «Высшая школа», 1979.
7. «Картлис цховреба» (История Грузии), изд. Артануджи, Тбилиси, 2008.
8. Ригведа. Мандалы I-IV, Издание подготовила Т. Я. Елизаренкова, Изд. АН СССР, Литературные памятники, «Наука», М., 1989.
9. “Keilschrifturkunden aus Boghazköi, Staatliche Muzeum zu Berlin, Vorderasiatische Ald.”, Hf. 1-30, Berlin, 1923-1939:
10. Wörterbuch Sanskrit-Deutsch von Dr.Dr. habil. Klaus Mylius, “VEB Verlag Enziklopädie”, Leipzig, 1980.
11. **Աբեղյան Մ.**, Երկեր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. VII, Եր., 1975:
12. **Ա-Դո**, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Եր., 1912:
13. **Ադոնց Ն.**, Հայաստանի Պատմություն. Ակունքները, X-VI դդ. մ.թ.ա., «Հայաստան» հրատ., Եր., 1972:
14. **Աղայան Է.**, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1974:
15. **Աձառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատ., հատ. IV, Եր., 1979:
16. **Բաղայան Հ.**, Օրացույցի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1970:
17. **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1963:
18. **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն տանն Արծրունեաց, Բնագիրը, թարգմանությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյան, ԵՀ հրատ., Եր., 1985:
19. **Հարությունյան Ս.**, Հայ ժողովրդական հանելուկներ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1965:
20. **Հմայակյան Ս.**, Վանի թագավորության պետական կրոնը, ՀՀ ԳԱ հրատ., Եր., 1990:
21. **Մալխասյանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, ՀՍՍՌ Պետ. հրատ., հատ. IV, Երևան, 1945:
22. **Մովսիս Խորենացու** Պատմություն Հայոց, Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, ԵՀ հրատ., Եր., 1981:
23. **Մովսիսյան Ա.**, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), ԵՀ հրատ., 2005:
24. **Մուրադյան Մ.**, Բառագիտություն, «Հայոց լեզվի պատմական քերականություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. II Եր., 1975:
25. **Պետրոսյան Ս.**, Ասուվա երկիրը և զույգ առաջնորդների սոցիալական ինստիտուտը, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2002, N 3:
26. **Պետրոսյան Ս.**, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, ՀՀ ԳԱ հրատ., Եր., 2006:

27. **Պետրոսյան Ա.**, Զարմայր նահապետի և «Քաղղէացոց» արքայացանկի շուրջ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտ. աշխատություններ», հատ. XVII, Գյումրի, 2014:
28. **Պետրոսյան Ա.**, Վիպական Հայկը, պատմական Հայկը և նրա ժառանգությունը, «Վէմ», 2022, թիվ 1:
29. **Պետրոսյան Ա.**, Էրլայերեն և արաղերեն արձանագրությունները Հայկի և իր երկու տոհմապետերի մասին, «Վէմ», 2023, N 3:
30. **Պետրոսյան Ա.**, Թեշուբի հայկական մակդիրները գահանուններում, «Հանրապետական գիտ. նստաշրջանի նյութեր (սվիրվում է Հ. Աճառյանի ծննդյան 135-ամյակին)», «Էլդորադո», Գյումրի, 2011:
31. **Պետրոսյան Ա.**, Հարևան երկրների հայկական անվանումները, «Վէմ», 2021, N 3:
32. **Պետրոսյան Ա.**, Պատմականը Զարմայր նահապետի մասին ավանդազրույցում, «ԳՊՄԻ հանրապետական գիտ. նստաշրջանի նյութեր», պրակ. II, Գյումրի, 2009:
33. **Պետրոսյան Ա.**, Adduru և Eritia սեպագրային լեռնանունների շուրջ, «Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողով (սվիրված է Աղայանի ծննդյան 110-ամյակին), ՀՀ ԳԱԱ ԼԻ, Եր., 2023:
34. **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» հրատ., Եր., 2010:
35. **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1987:
36. **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. I , Եր., 1978:
37. **Авдиев В. И.**, История древнего Востока, Гос. изд. Политической литературы, Л., 1953.
38. **Арутюнян Н. В.**, Биайнили (Урарту), Изд. АН Арм. ССР, Ер., 1970.
39. **Блаватская Т. В.**, Троянская война, «Советская историческая энциклопедия», т. XIV, М., 1973.
40. **Герни О. Р.**, Хетты, изд. «Наука», М, 1987, с. 159.
41. **Дьяконов И.М.**, Ассиро-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951.
42. **Дьяконов И. М.**, Ранние деспотии в Месопотамии, «История древнего мира. Ранняя древность», Главная редакция восточной литературы, М., 1989.
43. **Иванов В. В.**, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну, «Հայկազունիներ» (սվիրվում է Հայոց ձորի ճակատամարտի 4500-ամյակին), ՀՀ ԳԱԱ հրատ., Եր., 2013:
44. **Кифишин А. Г.**, Нарамсин, «Советская историческая энциклопедия», Изд. «Советская энциклопедия», т. IX, М., 1966.
45. **Меликишвили Г. А.**, Урартские клинообразные надписи, Изд. АН. СССР, М., 1960.
46. **Forrer E.**, Die Boghazköi-Texte in Umschrift, II, Leipzig, 1926.
47. **Forrer E.**, Die Provinzeinteilung des assyrischen Reiches, Leipzig, 1920.
48. **Forrer E.**, Hajasa-Azzi, "Caucasica", Leipzig, 1931, Fasc. 9.
49. **Foster B.**, Naram-Sin in Martu and Magan, "Annual Review of the Royal inscription of Mesopotamia project", vol. VIII, 1990:
50. **Hirsch H.**, Die Inschriften der Könige von Agade, "Archiv für Orientforschung", Graz, 1963, Bd. 20.

51. **Oktay Belli**, Anzaf Kaleleri ve Urartu tanrıları, “Arkeoloji ve Sanat Yayınları”, İstanbul, 1998.

## REFERENCES

1. “Bargirk hayots”, ǰnnakan bnagirē, aǰajabanē yev tsanotagrutyunnerē H. Amalyan, HSSH GA hrat., Yer., 1975 **(In Armenian)**.
2. “Drevnegrechesko-russkij slovar”, Sostavil I. H. Dvoreckij, Gos. izd. Inostrannyx i nacional'nyx slovarej, t. I, M., 1958 **(In Russian)**.
3. “Hay zhoghovrdi patmutyan krestomatia”, hat. I, Hnaguyn zhamanaknerit's minchev IX dari keserē, EH hrat., Yer., 1981 **(In Armenian)**.
4. “Hay zhoghovrdi patmutyun”, hat. I, HSSH GA hrat., Yer., 1971 **(In Armenian)**.
5. “Istorija drevnego Vostoka”, pod. red. V. I. Kuzish'ina, M., “Vysshaja shkola”, 1979, s. 154 **(In Russian)**.
6. “Kartlis cxovreba” (Istorija Gruzii), izd. Artanudzhi, Tbilisi, 2008 **(In Russian)**.
7. “Nor bargirk haykazean lezui”, erkasirutiu G. Avetikēan, H. Siurmēlean, M. Augerean, h. II, Venetik-Yer., EH hrat., 1981 **(In Armenian)**.
8. “Rigveda”. Mandaly I-IV, Izdanie podgotovila T. Ja. Elizarenkova, Izd. AN SSSR, Literaturnye pamjatniki, “Nauka”, M., 1989 **(In Russian)**.
9. **Abeghyan M.**, Yerker, HSSH GA hrat., h. VII, Yer., 1975 **(In Armenian)**.
10. **Acharyan H.**, Hayeren armatakan bararan, Yerevani hamalsarani hrat., hat. IV, Yer., 1979 **(In Armenian)**.
11. **A-Do**, Vani, Bitlisi yev Ērzrumi vilayetnerē, Yer., 1912 **(In Armenian)**.
12. **Adont's N.**, Hayastani Patmutyun. Akunknerē, X-VI dd. m.t.a., “Hayastan” hrat., Yer., 1972 **(In Armenian)**.
13. **Aghayan Ē.**, Baraknnakan yev stugabanakan hetazotutyunner, HSSH GA hrat., Yer., 1974 **(In Armenian)**.
14. **Arutjunjan N. V.**, Biajnili (Urartu), Izd. AN Arm. SSR, Yer., 1970 **(In Russian)**.
15. **Avdiev V. I.**, Istorija drevnego Vostoka, Gos. izd. Politicheskoy literatury, L., 1953 **(In Russian)**.
16. **Badalyan H.**, Orašuyši patmutyun, HSSH GA hrat., Yer., 1970 **(In Armenian)**.
17. **Blavatskaja T. V.**, Trojanskaja vojna, “Sovetskaja istoricheskaja enciklopedija”, t. XIV, M., 1973 **(In Russian)**.
18. **D'jakonov I. M.**, Rannie despotii v Mesopotamii, “Istorija drevnego mira. Ranjaja drevnost”, Glavnaja redakcija vosstochnoj literatury, M., 1989 **(In Russian)**.
19. **D'jakonov I. M.**, Assiro-vavilonskie istochniki po istorii Urartu, “Vestnik drevnej istorii”, 1951 **(In Russian)**.
20. **Gerni O. R.**, Hetty, izd. “Nauka”, M, 1987 **(In Russian)**.
21. **Harutyunyan S.**, Hay zhoghovrdakan hanelukner, HSSR GA hrat., Yer., 1965 **(In Armenian)**.
22. **Hmayakyan S.**, Vani tagavorutyany petakan kronē, HH GA hrat., Yer., 1990 **(In Armenian)**.
23. **Ivanov V. V.**, Vydelenie raznyx xronologicheskix sloev v drevnearmjanskom i problema pervonachal'noj struktury teksta gimna Va(x)agnu, “Haykazuniner”, HH GAA hrat., Yer., 2013 **(In Russian)**.
24. **Jahukyan G.**, Hayeren stugabanakan bararan, “Asoghik” hrat., Yer., 2010 **(In Armenian)**.

25. **Jahukyan G.**, hayoś lezvi patmutiun. nakhgrayin zhamanakashrjan, HSSH GA hrat., Yer., 1987 **(In Armenian)**.
26. **Kifishin A. G.**, Naramsin, “Sovetskaja istoricheskaja enciklopedija”, Izd. “Sovetskaja enciklopedija”, t. IX, M., 1966 **(In Russian)**.
27. **Malkhasyans’ St.**, Hayeren bas’atrankan bararan, HSSR pet. hrat., hat. IV, Yer, 1945 **(In Armenian)**.
28. **Melikishvili G. A.**, Urartskie klinoobraznyje nadpisi, Izd. AN. SSSR, M., 1960 **(In Russian)**.
29. **Movsisyan A.**, Hayastanē Křistositś araj yerrord hazaramyakum (ēst gravor aghbyurneri), EH hrat., 2005 **(In Armenian)**.
30. **Movsisi Khorenacvoy** Patmutivn Hayotś, Křnnakan bnagirē M. Abeghyani yev S. Harutiunyani, EH hrat., Yer., 1981 **(In Armenian)**.
31. **Muradyan M.**, Baragitiutiun, “Hayotś lezvi patmakan kerakanutiun”, HSSH GA hrat., hat. II, Yer., 1975 **(In Armenian)**.
32. **Petrosyan S.**, Adduru yev Ēritia sepagrayin lernanunneri shurj, “Hayotś lezvi usumnasirutiyan yev usutśman ardi khndirner” mijazgayin gitazhoghov (nvirvatś Ē. Aghayani tśnndyan 110-amyakin), HH GAA LI, Yer., 2023 **(In Armenian)**.
33. **Petrosyan S.**, Asuva yerkirē yev zuyg arajnordneri socialakan institutē, “Patma-banasirakan handes”, 2002, N 3 **(In Armenian)**.
34. **Petrosyan S.**, Daserē yev eradasutiyan drsevorunnerē hin Hayastanum, HH GAA hrat., Yer., 2006 **(In Armenian)**.
35. **Petrosyan S.**, Ēblayeren yev akaderen ardzanagrutiunnerē Hayki yev ir erku tohmapeteri masin, “Vēm”, 2023, N 3 **(In Armenian)**.
36. **Petrosyan S.**, Patmakanē Zarmayr nahapeti masin avandazruycum, “GPMI hanrapetakan gitakan nstashrjani nyuter”, prak II, Gyumri, 2009 **(In Armenian)**.
37. **Petrosyan S.**, Teshubi haykakan makdirnerē gahanunnerum, “Hanrapetakan git. nstashrjani nyuter”, “Ēldorado”, Gyumri, 2011 **(In Armenian)**.
38. **Petrosyan S.**, Vipakan Haykē, patmakan Haykē yev nra zharangutiunē, “Vēm”, 2022, N 1 **(In Armenian)**.
39. **Petrosyan S.**, Zarmayr nahapeti yev “Kaghdeatsvotś» arkayatsanki shurj, HH GAA Sh HHK “Gitakan ashkhatutiunner”, hat. XVII, Gyumri, 2014 **(In Armenian)**.
40. **Srvanzdtyantś G.**, Yerker, HSSH GA hrat., hat. I, Yer., 1978 **(In Armenian)**.
41. **Tovma Artśruni** yev **Ananun**, Patmutivn tann Artśruneatś, Bnagirē, ĩargmanutiunē yev tśanotagrutiunnerē V. Vardanyan, EH hrat., Yer., 1985 **(In Armenian)**.
42. **Yeremyan S.**, Hayastanē ēst “Ashkharhacoyc”-i, HSSH GA hrat., Yer., 1963 **(In Armenian)**.